ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 95

ք. Երևան 11.12.2023թ.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի, լաբորատոր ազդանյութերի, պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/56» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ էր ներկայացրել նաև «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն /ՀՎՀՀ՝ 00471216, գործունեության հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ.Թաիրով, Դեմիրճյան թաղ, 1փ, 22/1/(այսուհետ՝ Մասնակից):

Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-9/56» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակիցների կողմից ներկայացված գնային պայմանագրերի նախագծերը, գնահատող հանձնաժողովն արձանագրել էր, որ ընթացակարգի շրջանակներում ընտրված բոլոր մասնակիցների կողմից առաջարկվել էին Հայաստանի Հանրապետության գրանցված դեղերի պետական գրանցամատյանում /ռեեստրում/ գրանցված դեղեր, բացառությամբ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի, որի կողմից 22-րդ չափաբաժնի (ասկորբինաթթու ascorbic acid) մասով առաջարկվել էր ՀՀ չգրանցված դեղ: Ուստի, հրավերով սահմանված կարգով, մասնակիցը պայմանագրի նախագիծը ներկայացնելուց, որակավորման ապահովման հետ միաժամանակ պետք է ներկայացներ պահանջվող տեղեկանք՝ չգրանցված դեղի մասով:

Սակայն «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից գրությամբ ներկացվել էր ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ին ուղղված գրությունը, որում նշվում էր, որ վերոնշյալ արտադրանքը գրանցված է ԵԱՏՄ միասնական գրանցամատյանում որպես կենսաբանական ակտիվ հավելում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, 24.11.2023թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը ընտրված մասնակիցների առաջարկները գնահատել էր բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի առաջարկի, որի մասով գնահատող հանձնաժողովը որոշել էր կասեցնել նիստը՝ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը կառուցվածքային ստորաբաժանման կողմից լրացուցիչ հարցում կատարելու նպատակով:

30.11.2023թ.-ի կայացած նիստում գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հարցմանն ի պատասխան ստացված գրությունը, որով փաստում էր, որ վերոնշյալ արտադրանքը ձևավորված և ներառված է ԵԱՏՄ միասնական գրանցամատյանում որպես կենսաբանական ակտիվ հավելում, իսկ կենսաբանական ակտիվ հավելումները չեն հանդիսանում դեղեր, ուստի չեն կարող կիրառվել բուժական նպատակով: Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի առաջարկը 22-րդ չափաբաժնի մասով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ